


Թեքահարթակի բազրիքների նորմատիվները

Երբ թեքահարթակի հորիզոնական երկարությունը գերազանցում է 180 սմ կամ թեքման անկյունը՝ 8%-ը, ապա թեքահարթակի շարժման ուղղությանը զուգահեռ անհրաժեշտ է նախատեսել բազրիքներ, որոնց գեղարվեստական ձևավորումը պետք է հիմնվի նախատեսված սխեմատիկ կառուցվածքային նորմատիվների վրա (տե՛ս Գծագիր 8):

Եթե թեքահարթակը մի կողմից եզրափակված է պատով (օրինակ՝ շենքի պատին զուգահեռ է), ապա բազրիքը պետք է կառուցվի բաց կողմում: Ցանկալի է կառուցել բազրիք նաև պատի կողմից՝ առավելագույն հարմարավետություն ապահովելու համար:

Անվասայլակով անվտանգ տեղաշարժումը ապահովելու համար բազրիքի երկարությունը պետք է 30 սմ-ով գերազանցի թեքահարթակի երկարությունը՝ սկսված թեքահարթակի թեքման կետերից (տե՛ս Գծագիր 8):

Թեքահարթակի բազրիքի սխեմատիկ կառուցվածք




Գծագիր 8 Մ 1 : 20

Թեքահարթակի բազրիքին զուգահեռ անհրաժեշտ է կառուցել անվտանգության եզրաշերտ՝ գետնից 5 սմ բարձրությամբ (տե՛ս Գծագիր 9):

Բազրիքի համար նախատեսվող բռնակները (նախատեսված նախադպրոցական տարիքի երեխաների, անվասայլակով շարժվողների, ինչպես նաև հետիոտնի համար) ցանկալի է լինեն ամբողջ երկարությամբ հոծ և շրջանաձև կտրվածքով՝ տրամագիծը 3-5 սմ (տե՛ս Գծագիր 8):

Վերը նշված նախապայմաններին համապատասխան կարելի է բազրիքները ձևավորել տարբեր գեղարվեստական ոճերով, որոնք կլինեն տվյալ միջավայրին ներդաշնակ և գործնականորեն հարմար:



Գծագիր 9 Մ 1 : 20



Մայթեզրի թեքահարթակների և անցումների անհրաժեշտ նորմատիվները


Մայթեզրից փողոցի երթևեկելի մասի և մայթի միջև, ինչպես նաև մայթից մայթ անցումը անվասայլակով անձին մատչելի դարձնելու համար անհրաժեշտ է կառուցել թեքահարթակներ՝ հիմնվելով վերոհիշյալ նորմատիվների վրա (տե՛ս Գծագիր 2, 3, 5):

Մայթեզրի վրա թեքահարթակների թեքման անկյունը կարող է լինել 10%, իսկ լայնությունը առվազն 90 սմ: Բազրիքներ չեն պահանջվում (տե՛ս Գծագիր 10):




Մայթեզրի վրա թեքահարթակների տեղի ու դիրքի ընտրությունը որոշվում է ելնելով մի քանի նախապայմաններից.


- Այն պետք է ապահովի առավել կարճ անցում դեպի շենքի մուտք (տե՛ս Գծագիր 11):




- Թեքահարթակի դիրքը պետք է լինի այնպիսին, որպեսզի չխանգարի մայթով հետիոտնի շարժմանը, մասնավոր դեպքերում անհրաժեշտ են այլ լուծումներ (տե՛ս Գծագիր 12):



- Եթե փողոցի և մայթի միջև կա զազոն, ապա թեքահարթակը կարելի է կառուցել այդ հատվածում, իհարկե, հաշվի առնելով կանաչապատ տարածքը և պահպանելով ծառերն ու բույսերը (տե՛ս Գծագիր 11):





- Եթե փողոցի և մայթի միջև կա զազոն, և դրա կոնկրետ հատվածում նախատեսված է բաց տեղ հետիոտնի անցման համար, ապա թեքահարթակը ցանկալի է կառուցել հենց այդ մասում (տե՛ս Գծագիր 13):



- Եթե հետիոտնի անցման համար նախատեսված հատվածը չունի թեքահարթակի կառուցման համար նվազագույն լայնություն (90 սմ), ապա անհրաժեշտ է այս հատվածը լայնացնել՝ դարձնելով 90 սմ, հակառակ դեպքում ցանկալի է այն ամբողջ լայնական հատվածում վերածել թեքահարթակի (տե՛ս Գծագիր 13):

Շենքի ներքին հարդարանքի նորմատիվային պահանջներ՝ անվասայլակով անձի ազատ տեղաշարժման հետ և շենքի ներսում առկա ենթակառուցվածքներից օգտվելու համար


Շենքի մուտքի մոտ թեքահարթակ կառուցելիս անհրաժեշտ է նաև մուտքից առաջ և հետո (շենքի ներսում) նախատեսել 150 սմ ոչ պակաս տարածություն՝ անվասայլակով հարձար ելուձուտ անելու համար (տե՛ս Գձագիր 14):



Շենքի ներսում դռները պետք է լինեն նվազագույնը 90 սմ լայնությամբ (տե՛ս Գձագիր 14):


Դռան մուտքը/շենքը պետք է լինի հարթ՝ անվասայլակի շարժմանը չխոչընդոտելու համար (տե՛ս Գձագիր 15):

Շենքի ներսում դռների բռնակները պետք է ունենան բավարար մակերես՝ ձեռքով հարձար բռնելու համար: Դեպի դուրս բացվող դռների դեպքում դռան ներսից անհրաժեշտ է նախատեսել 50-70 սմ բարձրությամբ բռնակ (տե՛ս Գձագիր 15):




Գձագիր 15 Մ 1 : 50

Անվասայլակից օգտվող մարդկանց համար սեղանների չափերն և ունեն իրենց պահանջները: Աշխատանքային մակերեսը պետք է ունենա հատակից 80 սմ բարձրություն, իսկ ներքին հատվածի բարձրությունը պետք է լինի 72 սմ հատակից (տե՛ս Գծագիր 16):
 Սեղանի տակ պետք է լինի բավարար տարածություն (65 սմ խորշ) սայլակով մարդու ոտքերը հարմար տեղավորելու համար:



Անվասայլակից օգտվող մարդկանց համար շենքի ներսում տարբեր կենցաղային գործողությունների համար նախատեսված առարկաները տեղադրելիս (օրինակ՝ վարդակ) անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանց ցանկալի բարձրությունը հատակից պետք է լինի 70-110 սմ (տե՛ս Գծագիր 17):




Սանհանգույցների կառուցման չափանիշային պահանջները

Անվասայլակից օգտվող մարդկանց համար սանհանգույցներում անհրաժեշտ է պահպանել հետևյալ չափանիշները (տես Գծագիր 18, 19)։

- Սանհագույցի դուռը պետք է լինի առնվազն 80 սմ լայնությամբ։
- Ցանկալի է, որ պետքի դուռը լինի շարժական անվիկների (ռոլիկների) վրա, պատին գուլգահեռ, հակառակ դեպքում՝ միմիայն դուրս բացվող տարբերակով, իսկ դռան ներսի կողմից՝ գետնից 70 սմ բարձրությամբ, պետք է տեղադրվի բռնիչ։
- Ջուլգարանում պարագաների դասավորությունը պետք է ապահովի անվասայլակով մարդու ազատ մոտեցումը զուլգարանակոնքին և լվացարանին։

Գծագիր 18 Մ 1 : 40



Գծագիր 19 Մ 1 : 40

